



«Հիմնադրամի դեսպաններ» ծրագիր

Նախաբան.

Հիմնադրամի մասին տեղեկատվությունն առավել արդյունավետ տարածելու, ինչպես նաև նվիրաբերությունների հավաքագրումը խթանելու նպատակով Հիմնադրամը մշակել է «Հիմնադրամի դեսպաններ» ծրագիրը: Ծրագրի նպատակն է զգալի հայ համայնք ունեցող քաղաքներում ունենալ Հիմնադրամի գործունեությունը ներկայացնող և Հիմնադրամի հետ անմիջապես համագործակցող առնվազն մեկ դեսպան: Այդ դեսպանների միջոցով Հիմնադրամը կփորձի իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել և նվիրաբերություններ հավաքագրել Սփյուռքում:

Դեսպանների հավաքագրումը.

Հիմնադրամի դեսպաններ կարող են լինել համայնքի ղեկավարներ կամ հետաքրքրված երիտասարդ մասնագետներ: Հավաքագրումը կիրականցվի հետևյալ եղանակներով.

- ա) Հետաքրքրված անձի նախաձեռնությամբ՝ անձամբ Հիմնադրամին դիմում ներկայացնելու միջոցով: Դիմումները կարող են ներկայացնել Հիմնադրամի կայքի միջոցով
- բ) Հիմնադրամի նախաձեռնությամբ՝ Սփյուռքում գտնվող կառույցներին դիմելու միջոցով

Դեսպաններին տրամադրվող օգտակար նյութեր:

Յուրաքանչյուր դեսպան կստանա օգտակար նյութերի փաթեթ: Փաթեթի միջոցով դեսպաններն առավել արդյունավետ եւ արագ կկարողանան կազմակերպել իրենց գործունեությունը: Փաթեթը ներկայումս հասանելի է 4 լեզուներով՝ Անգլերեն, Ռուսերեն, Իսպաներեն և Հայերեն: Փաթեթում ներառված են՝

1. **Բրոշյուր** - «Զինձառայողների ապահովագրության» Հիմնադրամի գործունեությունը մանրամասն ներկայացնող նյութ, որն անհրաժեշտ կլինի դեսպանին Հիմնադրամի աշխատանքի բոլոր մանրամասները հասկանալու համար
2. **Պրեզենտացիա և համապատասխան խոսք** – Պրեզենտացիան և առաջարկվող խոսքը հնարավորություն կտան դեսպաններին իրենց համայնքին արդյունավետորեն ներկայացնել Հիմնադրամի գործունեությունը: Դեսպանին կթույլատրվի պրեզենտացիայում և խոսքում կատարել փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության:
3. **Հաճախ տրվող հարցեր** - դեսպաններին կտրամադրվի նաև հաճախ տրվող հարցերի և դրանց պատասխանների ցանկ, որը նրանց կօգնի պատրաստ լինել հետաքրքրված անձանց կողմից տրվող հարցերի.
4. **Ծրագրի օրինակ** - Դեսպանին կտրամադրվի իր աշխատանքների կազմակերպման ծրագրի օրինակ, որը կներառի նվիրաբերությունների հավաքագրման չափանիշների,

վերջնաժամկետների և նախատեսվող միջոցառումների համար դաշտեր: Դիմորդը պարտավոր կլինի լրացնել ծրագիրը և այն տրամադրել Հիմնադրամին:

Նպատակ.

Երկարաժամկետ (2018-2028)

1. Ունենալ դեսպան բոլոր այն քաղաքներում, որտեղ կան մեծ հայ համայնքներ
2. Տարեցտարի 30%-ով ավելացնել արտերկրից ստացվող նվիրաբերությունների ծավալը:
3. Շարունակական նվիրաբերությունների տոկոսային կշիռը ներկայիս 35%-ից բարձրացնել 70%-ի:

Կարճաժամկետ (2018-2019)

1. Ներգրավել 24 դեսպան
2. 2017-2018թթ. արտերկրից ստացված նվիրաբերությունների ծավալն ավելացնել 30%-ով:
3. Դեսպանների միջոցով կազմակերպել Հիմնադրամի հետ կապված առնվազն 1 միջոցառում յուրաքանչյուր համայնքում (ընդհանուր՝ 24 միջոցառում):

Դեսպաններին խրախուսող միջոցառումներ

Նախատեսվում է նաև մշակել միջոցառումներ, որոնցով Հիմնադրամը կխրախուսի իրենց պարտականությունները պատշաճ իրականացնող դեսպանների: Խրախուսող միջոցառումների հնարավոր տարբերակներ կարող են լինել

- Պաշտպանության նախարարի մասնակցությամբ զինվորական ոճի ճաշի կազմակերպում
- Պաշտպանության Նախարարի անունից ձեռագիր շնորհակալական նամակի շնորհում
- Հայաստան-Մփյուռք համաժողովին մասնակցելու հնարավորության տրամադրում և այլն: